ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

22 հունիսի 2012թ. թիվ 237

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի «Վարչական հսկողության 2012 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 11-Ա հրամանը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

2012թ. Լոռու մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնող հանձնաժողովին (հանձնաժողովի կազմը կցվում է)՝

1. ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքում 2012թ. հունիսի 25-ից 27-ը ներառյալ իրականացնել վարչական հսկողություն:

2. Վարչական հսկողությունն իրականացնել համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից 2010-2011թթ. և 2012 թվականի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացված լիազորությունների նկատմամբ:

3. Ստուգումն իրականացնել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 02-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցի համաձայն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. հունիսի 22
ք.Վանաձոր